

ՏԱՄՆ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1889 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն ղրքով և նոյն պրոգրամայով: Մինք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ՝
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսականը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատանը (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում) Թամարայի տանը:
Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է լինել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆՈՒՆԻ

ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կոմս Լօրիս-Մէլիքովի թաղումը: Մի յարուցված հարցի առիթով: Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի-նիստական փոփոխութիւնը. Ֆրանսիայում. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սալոմէ Նորատունկեան.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՄՍ ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎԻ ԹԱՂԱՌԱՐԸ

Փետրվարի 7-ին, վաղ առաւօտեանից, Թիֆլիսի փողոցներում, չը նայելով ցուրտ և քամոտ եղանակին, նկատուում էր մի արտասովոր կեանք և երկնակութիւն: Ամենքը շտապում էին, թէ կառքերով և թէ ոտով դէպի երկաթուղու կայա-

րանը: Տները պատահաններում և բաղնիքներում բազմաթիւ հանդիսականներ էին երևում: Ժամը 9-ին առաւօտեան կայարանի դռները լի էին բարձրատիճան աստիճանադններով, այլ և այլ քաղաքների և ընկերութիւնների պատգամաւորներով և մամուլի ներկայացուցիչներով: Հանգուցեալ կոմս Լօրիս-Մէլիքովի ընտանիքը կայարանի մի առանձնասենեակումն էր, իսկ միւս դահլիճներում, ի միջի այլոց, մենք նկատեցինք իշխան Մկրտիչին, իշխան Մէլիքովին, Թիֆլիսի նահանգապետ իշխան Դերվիշիւնին, Գրիշայիսի նահանգապետ գեներալ Գրոմանին, Թիֆլիսի շքանի նահանգապետ գեներալ Սիւլալովին, Կարսի նահանգապետ գեներալ Տոմիչին: Այնուհետեւ երևում էին հասարակութեան մէջ Ամիրխանովը, Չալալաձէն, Քիչմիշին, Տուտուլին գեներալները և այլն:

Կայարանի դահլիճներում գրված էին սեղանների և աթոռների վրա բազմաթիւ պատկերներ: Աչքի էին ընկնում հետեւեալ պատկերներ. 1) Ու-

կեղծ պսակ կովկասեան դօրքի կողմից, 2) արծաթի պսակ Պետերբուրգի հայ հասարակութեան կողմից, 3) արծաթի պսակ զորոյ Կրակովսկու կողմից, «Հշմարտութեան համար մարտնչողին» վերտառութեամբ, 4) արծաթի պսակ, մախմուրի բարձի վրա, զարդարված այլ և այլ պատաւանշանների ժապաւեններով Սոնտէնեան-Վլադիկովսկու կողմից, 5) Գերբէնտի ժողովարանի կողմից ոսկեղծ հասկերով մի պսակ «Իր հինադրին և պատաւոր անդամին» վերտառութեամբ, 6) Թիֆլիսի հրէաների կողմից, 7) Պետերբուրգի հրէաների կողմից, 8) Հրէայ Պոլիս-կովից, 9) Հրէայ Գիւնցուրդից, 10) Խարկովի հրէաներից, 11) Վարչապալայի հայերից, 12) Հանգուցեալի հայրենակից լուսեցիներից, 13) Բազուքալարից, 14) Բազուկի հայ հասարակութիւնից, 15) Փոթիի հայերից, 16) Գրադիստովսկոյ տա-րածման վրաց ընկերութիւնից, 17) Գուրմախի հայերից, 18) Ելիսաւէտովի հայերից, 19) Երևան քաղաքից, 20) Թէլաւի հայերից, 21) Ախալցխայից, 22) Վլադիկովսկոյի հայերից, 23) Վլադիկովսկոյի Լօրիս-Մէլիքովի արհեստագործ զորոցից, 24) Վարդերից շինված մի գեղեցիկ պսակ իշխան Մէլիքովի կողմից, 25) Արուստա-կան տերերից շինված մի պսակ Գաւթ-Խան Աղաւարից, 26) Աստրախանի հայ հասարակու-թիւնից, 27) Թիֆլիսի աղետակալութիւնից, 28) Նոր-Գալաթի քաղաքից, 29) Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութիւնից, 30) Ալեքսանդրապոլի հասարակութիւնից, 31) Իշխան Յովհաննէս Բագրատիւն-Մուխրանսկու կողմից, 32) Գո-րու աղետակալութիւնից, 33) Պետերբուրգի յար-գործների կողմից, 34) Թիֆլիսի մեշայանների ըն-կերութիւնից, 35) Վլադիկովսկոյի ժողովարա-նից, 36) Թիֆլիսի արհեստագործներից, 37) Շու-չու հասարակութիւնից, և այլն և այլն... Պսակ-ների ընդհանուր թիւը, որքան մեղ յայտնի է,

60-ի էր համարում:
Երբ երկաթուղու գնացքը կանգնեց կայարանի առջև, հանդուցեալի դադարը, զինուորականների օգնութեամբ, զգուշութեամբ դուրս բերեց կա-նաչով և պսակներով զարդարված վագոնից և զրկեց դիւակալի վրա:
Հայոց բազմաթիւ հոգեւորականութիւնը, սրբա-ղան առաջնորդի հետ՝ սկսեց անմիջապէս կա-տարել հոգեհանգիստը: Իսկ վագոնից շարունա-կում էին դուրս բերել դարձեալ մի տաս հատ պսակներ, որոնց մէջ աչքի էր ընկնում Մարտէլի հայերի՝ սև յուղունքներից շինված պսակը, որի վրա սպիտակ տառերով գրված էր՝ «La colonie arménienne de Marseille»:
Երբ հոգեհանգիստը վերջացաւ, յուղարկաւորութեան հանդիսաւոր գնացքը շարժվեց: Դա-դարը, որը մօտ 40 պուղ ծանրութիւն ունէր, ձեռքերի վրա դուրս բերեցին կայարանից և այնպէս էլ ձեռքերի վրա տարան մինչև վա-նքի մայր-եկեղեցին: Հոգեւորականութեան երկու կողմից գնում էին համբարները՝ իրանց զօրակ-ներով, ապա գնում էին քաղաքապետի պաշտօ-նակատարը, քաղաքային դումայի ձայնաւորները, արհեստագործների և մեշայանների աւագները, և այլ և այլ պատգամաւորները:
Այնուհետև տանում էին դադարը, որի ետևից գնում էին ոտով կոմսի երկու օֆիցեր որդիք, հանգուցեալի մօտիկ աղաղակները և ապա կառ-քերում նստած կոմսի մայրը, կնիւր և աղջիկնե-րը: Բազմաթիւ կառքերից յետոյ գալիս էր զին-ւորական նուազախումբը, ապա հետևակ զօրքի մի ամբողջ բաժանիւն, յետոյ զինուորական մի երկրորդ նուազախումբ, կովկասեան կառավար-չապետի թիկնապահների ձիաւոր խումբը, դար-ձեալ հետևակ զօրքի մի բաժանիւն, ձիաւոր կա-ղախների մի խումբ, ապա արտիլերիան և այլ բոլորին հետևում էր ամբողջ մի ահագին բազմութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԼՕՄԷ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Նոյեմբերի 28. Կատարեց վերջապէս նա իր ասածը... Լուում եմ, որ պաշտօնից դուրս է ե-կել... Պատմում են թէ՛ նրա պաշտօնը յանձնել են ուրիշներ... Ամենքը՝ զարմացած են մնացել... Մօրս ու Սարգիսի հարց ու փորձից չը գիտեմ ուր փախչում: Հարահառուված պատմեցի նրանց թէ՛ նոր պաշտօն պիտի ստանայ, և այդ նոր պաշտօնին անցնելու համար, հինը ստիպված էր թողնելու... Ի՛նչ խաբուսիկ բաներ չասես որ՝ չը պատմեցի նրանց, միայն թէ գլխիցս ձեռք վեր առնելու ի՛նչ անելի. ես ինքս էլ չը գիտեմ նրա արած այդ քայլի նշանակութիւնը և իմաս-տը: Բացի կրիւ ու հայհոյանքից՝ ոչ մի պատաս-խան չեմ կարողանում ստանալ նրանից...

Այսօր նրան հարցրեցի թէ՛ ի՛նչ է այժմ մտա-դիր անելու, որովհետեւ, անկասկածելի է, ոչ ոք իր նախաձեռնութեամբ նրան մի պաշտօն, կամ մի գործ չի առաջարկել. ինքը պիտի հոգա տանի գործ գտնելու համար: Մի այնպիսի կուրս չի առնում բարձրագոյն, որ ասել չեմ կարող: Եւ երբ մատ-նացայ արի թէ՛ փողոցում անցուկարձողի ուշա-դրութիւնն է գրաւում իր գուռ ու գուլամով, նա աւելի տաքացաւ և յետին պինդորի հայհոյանքով թնդացրեց օդը. անգուսպ գունակի վատախօս լե-զուն բացվեցաւ. անկրաւ զրպարտանքներ արա-մօրս հասցեով, պղծախօսեց հօրս յիշատակը, նրա գերեզմանը...

Ինքը հայր. խեղճ գերեզման. արախի տմարդու-

թիւնով էր անգոհանում իմ ներկայութեամբ...

Սրտիս ծանրութիւնից տեղ չէի գտնում հանդ-չելու: Անշուք աշխատային օրը աւելի ծանրաց-նում էր իմ ճնշված ոգին: Սրտնեղութիւնը եր-կար ժամանակ թող չէր տալի ինձ տեղից շար-ժելու, մինչդեռ դասերիս ժամը հասել էր: Հագն-վեցայ ու դուրս եկայ տանից: Բայց դասերի տեղ գերեզմանատուն հասայ: Ահա իմ խեղճ հօր գերեզմանը, որի շուրջը անասման անդոր-րութիւն էր տիրում, ամենուրեք տաղաղութիւն: Եկայ ու նստեցի գերեզմանի մօտ:

Տերերի մօտեքի կամարի միջից ամպածա-ծակ աշխատային պղտոր երկինքը նայում էր դե-րեղմանատան վրա և աւելի հանդիսաւոր կացու-ցանում ինձ շրջապատող լուսնիւնը: Միտքով հոլը մերթ ընդ մերթ խաղացնում էր այս կամ այն չիրիմների մօտ կիտված չոր չոր ու գեղին տերերները, որոնք խորհրդաւոր ստապիւնով ուր մօլոր գծեր անելուց յետոյ, կրկին՝ ձայն ու ձը պուլաները հատած՝ արեւմուտ էին չիրիմների վե-րա, կամ նրանց շուրջը: Տեղի տալով լուսնու լու-թեան մէջ սրտիս թնդումն ընդաւոր և մանր չաբուշներով բաբախում էր անանջներս մէջ, ա-նընդհատ և խառն չչուկի անցնելով: Թուում էր թէ այս չչուկը գալիս էր ինձ մեռած ընտելու-նից, սառն չիրիմներից, ու ժամանակ առ ժա-մանակ սարսուռը անցնում էր թիկնաւորութեան: Կու-ղէի լաւ, աղօթք անել, բայց իդուր... Սրտիս մէջ բոլորովին չորացել էին արցունքի կնիւնները: Կարծես սիրտը ցաւում, յետոյ՝ անսեղ ամուսնութեան զգուշութեամբ էր համակված սր-տըս ու հօգիս: Անցեալ անգին սիրտը մոխիրն էր, որ տակետակ տաքանում էր սրտիս մէջ, չորաց-նելով ամենայն արցունքի կարեւրութիւնը: Դառ-նութեամբ մտաբերում էի այդ անցեալի պարա-զանները, աւելի մեծ դառնութեամբ զգալի էին ինձ թուում իմ ամուսնական մօտայ կաց ու նիս-

տը... Շողակաթ սանամայր, ո՛հ, սիրնագործով մայր, արի, ամա այժմ, որպիսի անգուշող մէջ ինձ զօրեցիր: Եւրաթ՝ մէկ օր պիտի կարողա-նաս չափել այս անգուշող խորը Օ՛, կուղէի, շատ կուղէի, որ դու ես այստեղ լինէիր, այս անգուշող մէջ, ուր ոչ արեւ, ոչ լուսին, ոչ աստղ-ներ, ոչ օդ, ոչ հանգստութիւն... ոչինչ ոչինչ չը կայ, բացի անկատարած սրտի ցաւերից... Բայց ոչ, չուղեմ, չուղեմ թեղալէս անգուշ լինել. մնա-ցիր խաղաղ ու հանդիսաւոր, ուրուականիդ միմիայն պիտի կշտամբում հանապաղէ: Տեսնում եմ՝ քո ամեն հաշիւները կատարվեցան. Մանուէլը աղաւ է, ես ամուսնացաւ: Արտաքոյ ամենայն ինչ գլուխ եկաւ ուրեմն, միայն թէ սրտիցս չը կարողացար կոր-դել այն, ինչ որ վերէն է տուած: Այժմ էլ անա-յայս անպարագիծ տառապանքների մէջ միակ միմիայնութիւնս, սրտիս կրակը միակ գոլացնո-ղը նրա անմոտաց յիշատակն է: Կարող եմ ար-գեծը նրան ինձանից խլել: Եւրթէ: Եւրթ ինչ եմ ասում. նկատե՛ք եմ, որ հէցը անձնատուր եմ լի-նում այս սրտագին յիշատակներին, իսկայն և եթ զլիսիս պատահաւ է գալիս: Եւ այժմ էլ դիտեմ, որ մի ուրախաբեր նշան չէ՝ կարող լինել իմ թեղ հետ այս զրոյցը, բայց և այնպէս ամենայն տե-տակ չարչարանաց գո՛հ պիտի մնամ, միայն թէ շարունակեմ իմ ընդդիմադրութիւնը ուրուակա-նելով հետ: Որ պահուն էր, որտեղ էլ որ դուրս գաս իմ առաջը ինձ հաւաքելու մտքով, իմ ար-թուն և բուռն ընդդիմութեան կը պատահան միշտ: Այլապէս չէ՛ կարող լինել, մինչև որ չուղեղ ծածկում է իմ յիշողութեան մէջ Մանուէլի սի-րայից սրտիկերը. այն պատկերը՝ որ իմ անշուք անցեալի մէջ միակ աստղի տեղն է բռնում: Եւ ինչ, կարծում էի թէ՛ ժամանակը և հանգա-մանքները սպեղանի կարող էին լինել իմ կոտ-րած սրտիս համար. ոչ. այս կոտրած սրտը նա-խադրեց պիտի մնայ թեղ համար յաւիտեան: Եւ

այդ նախատիւնը օրից օր մեծանալու, օրից օր քո գլխին ծանրանալու վրա է: Փոթ չէ, որ հետեւ ես ինձանից և չես կարող չափել իմ կեանքի դառնութիւններն և այն կրակը, որի մէջ այր-վում է իմ սիրտը... Սրանց ամենի հատուցումն կը ստանաս երբ... Աստուած իմ, մեղմ քեզ...

Բայց ինչպէս չը մեղանայ, երբ անցեալի յիշա-տակներն ինձ հաւաքում են մինչև իսկ այս հանգստավայրը, երբ անցյալ տաղաքան յարատե-վախ ու սոսկանքով է ինձ սպառնում, երբ ան-միմիայն ներկան իր հազար ու մէկ տառա-պանքներով է ինձ վշտացնում: Ամեն բայէ, ամեն ժամ մօտայ մտքերը ինձ թռչ չեն տալիս աչք բացանալ... Ահա և այժմ, երբ այս հանգստա-վայրում մարդկային բազմադարեան թշնամու-թիւնները, առեւտրիւնները, սէրը լուռ են այս անխօս չիրիմների տակ, իմ սրտի մէջ եւ ու եփ է գալիս՝ և թշնամութիւն, և առեւտրիւն և սէր... Թշնամութիւն դէպի մարդիկ, առեւտրիւն նոյն իսկ ինձ դէմ, սէր դէպի անցեալի յիշատակ-ներ, առեւտրիւն դէպի կնիւնակեց, սէր դէպի այդ կենակցութեան պտուղը, որ, կրծքիս տա-կին բաբախելով, կեանք ու արեւ է խնդրում ին-ձանից: Կարող եմ արդեօք մերժել նրան այդ կեանքից, այդ արեւից և գալ այստեղ մի անխօս ու սառն չիրիմի տակ խեղդելու սրտիս մէջ ա-րեւիկոված և թշնամութիւնը, և սէրը... Ո՛րն է լաւը. միանգուցից վերջացնել այդ ամեն զգա-մունքներն ինձ և մատաղաչի համար, թէ մնամ ու աւանդեմ նրան մարդկային այդ միակ ժա-ռանգութիւնը: Երկրորդ դէպքում պիտի կատար-վի այն, ինչ որ ինձ տեղի է ունեցել. «ամեն գեները վաղուա՛ն են ծովը, բայց ծովը՝ այն տե-ղը, ուր թափվում են գետերը, չէ լցվում, կրկին այն տեղ են դառնում, որ գնան...»: Այսպէս էլ այն փորձիկ էակը և նա պիտի թշնամանէ, և

դեռ եւս չարոհանակութեամբ են գնել աղքատ գիւղացիներին հողաբաժինները: Միայն թէ աժմ, գիւղի չինական դատարանին ձեռքով քննչայէս կը վճարեն այդ կենսական հարցերը,—մեզ համար շատ մոտին է:

Ի դէպ է այստեղ յիշել նաեւ մի ամենացաւաւ իրողութիւն թէ քննչայէս մեզանում մեծ չեն գործում, նոյն իսկ հայերէն լեզուով, լրագրիները, ամսագրիները եւ այլն, այն ինչ ներկայումս գիւղացիներին մի նշանաւոր մասը գրադէտ է: Ինչպէս վերագրել յիշած տուրք երեւոյթը: Բայց քննչայէս կարող է ընթերցանութեան սէրը տարածվել գիւղական դատակարգի մէջ, քանի որ քաղաքացի կամ Հին-Նախնական լեզու վաճառականը դեռ չեն ըմբռնել, չեն հասկացել լրագրի, անկեղծ, անաչառ լրագրի կենսատու նշանակութիւնը, նոյն իսկ իրանց շահերի տեսակետից: Այո, քննչայէս կարելի է այդպիսի պահանջներ առնել գիւղացուց, երբ նոյն պահանջներին հեղեղութեամբ է հանդիպում քաղաքացիներ, երբ Հին-Նախնական ինտելիգենտ երիտասարդութիւնը, որը մի ժամանակ թնդացնում էր ողջ իր ազատամիտ բացականցութիւններով, այսօր անդոր է հանդիսանում մի սենեակ վարձելու մի հասարակ ընթերցարանի գոյութիւնը պահպանելու համար: Ի հարկէ, երբ այդ քննչայէս է, որտեղից կարելի է սպասել գիւղերում լրագրիների տարածվելը, ու՞մ չնորոգվ կը լինի դա, ու՞նեմը գիւղերում բանիմաց մարդիկ, ու՞նեմը պարտաճանաչ կղեր, որը հաշտ աչքով նայէր ժողովրդի վրա, որը ունենար բարոյական քաջութիւն անկեղծութեամբ վերաբերվելու նրա կարիքներին, որը անվերջ ժողովրդի քրտինքով դոնէ հող տանէր նոյն ժողովրդի բարօրութեան մասին:

ՆԱՄԱԿԱ ԱՌԱՅՈՒՄԱՅՑ

Թուականի 30-ին

Հասերը օտարերկրացիներին, որոնք երբ եւ ինչ աչքերը են Արաւելան, միշտ այն գաղափարն են կազմած, թէ Արաւելան, ինքնակամակապէս կողմնակի ամեն քաղաքներին յետընկածն է, եւ շատ խղճով տեսնակալ կողմից: Սակայն երբ այդպիսիները թափանցելու լինեն մեր գաղտնիքի մէջ, անշուշտ պիտի փոխեն իրանց կարծիքները: Մտէք Բաղրամյանի հայ արհեստագործի տան յարկի տակ եւ դուք կը գտնէք այնտեղ վերեւ յիշված գաղտնիքը, մեր հարստութեան զանաւոր: Գրանց տան ճակատին հետեւալ նշանաբանն է դրոշմած «Հայաստան», անտեսութիւնն է մարդկութեան: Նախ եւ առաջ ձեռք ներկայացվում է մարդկութեան արգասիքը, փողոցի կէտը աւելված, դրան շէնքը լուսացված. տան յատակը, տախտակամածը, սիններն, առաստաղը փայլում են սպիտակութեամբ եւ մաքրութեամբ. նայեցէք երեխաների զոհանքները, օձիկները, դըժա կտակից կամ հասարակ չից են կարված, թէպէտ ոչ բոլորովին ճաշկանգն ձևված, սակայն յարմարեցրած նրանց մարմինն մեծ հմտութեամբ. նայեցէք յատակի ծածկոցներին, բարձրերն եւ եթէ կան աթոռներ, նստարաններ՝ նրանց ծածկոցներին, գործածանքներին, հիւստածանքներն թէ որքան վայելուչ են հագցված. դրանց, միայն սակաւազին նիւթն է բազարից գնված, իսկ ամբողջ գործը, որ նիւթի հարկաբազարին արժէ, տան տիկնոջ կամ մանկահասակ օրիորդի ջանասիրութեան արդիւնքն է: Նայեցէք մի ուրիշ կողմ. ահա փուլեցաւ սեղանի սփռոցը, փղբիկ աթոռի վրա դրեցաւ կիւրակ սեղանը, շարքանք բարակ է ձիւնի նման սպիտակ լոշերը. ահա սեղանի բոլոր պարագանքները, մատուցին եւ կերակուրները պղնձեայ պնակների մէջ, եւ դրանք բոլորը շաքարում են իրանց մաքրութեամբ եւ խոհարարական հմտութեամբ: Հետաքրքրական է մանրամասն ծանօթանալ տան անտեսութեանը. մտէք մուռանը. այդտեղ դուք տեսնելու էք ամբողջ ամբիւններն եւ տարվայ պաշարը: Կճուճներ, սոսկալների եւ սնդուկների մէջ կանոնաւոր դարձված. թթուներ շոգաճարից, կաղամբից, ժախից, չորնդէններ, —կանաչ լոբիկ, աղցանից, տանձից, խնձորից, ճանճորից. հատիկներ—կորկոտ, բլուր, բրինձ, օսպ, սիսեռ, լոբի, մսացուից պատրաստված երշիկ, ապուխտ, աղած միս, դալարմայ. մրգերից պատրաստած քաղցրաւներ, փերվար. բարձրագոյն աչքերը դէպի առաստաղը, ահա այն տեղից քաջաբան է մի ահագին դէպ, փաթեթած ընդարձակ սաւանի մէջ. դա էլ մի քանի ամիսներին համար պատրաստած եւ չորացրած լոշն է,

որ տեսնուէին իւրաքանչիւր օր հարկաւորած բաժինը զատելով թրջում է, փաթեթում սաւանի մէջ եւ մի քանի րօպէից յետոյ պատրաստ է փախիկ, թարմ եւ համեղ հացը դարձելու սեղանի վրա: Բաւական է, այս ամենը տեսնելից յետոյ մարդկանց մէջ հարց է զարթոնում թէ ովքեր են այսքան ընդարձակ տնտեսութեան կառավարողները եւ քանի ձեռներ կ'որոշեն—կա ախարացի հայ կնոջ տնտեսական եւ խնայողական ձիրքներն են, ջանասիրութեան եւ տոկոսութեան արգասիքն է: Արաւելայի հայ կինը դիտէ, թէ երբ, ինչ տեսակ բարիք հարկաւոր է պատրաստել, գիտէ պահելու եւ պահպանելու եղանակը չը փանայու. համար, միջոց ունի տան լուսացը, կար կտուրը հողաւոր, գիտէ տնտեսութեան վերաբերեալ չափ եւ ձեռք, դիտէ հաց թխել, կարել, ձնել, գործել. եւ այս ամենից վերջն օրինակելի մաքրութեան մէջ պահել թէ տանեցոյ զոհանքները, թէ կա՞ն կարասիքը. ինքն է երեխայի դայակը եւ դաստիարակը. ինքն է իր կրթից երեխային սնունդ տալիս, լողացնում, քնեցնում, լուսեցնում, կերակուրներ պատրաստում, եւ մինչև անգամ այս ամբողջ բաղադրեալ մեքենան կառավարելից յետոյ, միջոց գտնում, ձեռագործով պարագում եւ մի փոքր օգնում իր մարդուն, աղջկայ օժտին եւ դարձաբաններին: Իր կնոջ այդ յատկութիւնն է մասնաբաշխ կապը, որ կապում է ժողովրդին իր բնակութեան տեղի հետ:

Բաղան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿԵՐ

Վրաց «Մոդէստի» լրագրից հաղորդում է, որ անցեալ 1888 թվ. ընթացքում ուղղափառութիւն ընդունեցին եւ մկրտվեցան 1918 մասնատակաւ արեւմտեցիներ: Այդ գործի մէջ, յիշեալ լրագրի ասելով, մեծ ջանք ցոյց տուց իշխանութիւնը. որը անհղին հեղինակութիւն ունի Արեւմտեայում եւ որին ռուսաց Սինոդը դուր համար օրհնութեան կոնդակ է ուղարկել:

ԿԱՐՏԻՑ գրում են մեզ, որ 29-ին յունիսի Կանդիսաւոր պատարագից յետոյ կատարվեց կարծի հայոց առաջնիկիցնում նորերում թիֆլիսում վարձանալով օրիորդ Գայեանէ Մովսէսիանին հոգնահանգիւր: Հանդուցեալի փեսան՝ Բ. Վաղապետիւնը, նախքան, նուիրեցին մի ջանք եւ քայլ արանից 10 աշակերտներ եւ աշակերտուհիներ համար պատրաստել տուցին մի մի ձեռք չոր, ի յիշատակ վաղամեռ օրիորդին:

Մեզ գրում են ԻԿԻԻԻՅ հետեւեալը. «Թուրքիայի 27-ին մի ժամի չափ անձրեւ եկաւ, այնպէս որ դաշտերը այժմ սևացել են, քիչ է մնում բոյսերը արդէն իրանց բողբոջներն արձակին: Բայց եթէ մի քանի օր այնպէս տաք եղանակ անկուց յետոյ, նորից ցրտի, այն ժամանակ մեծ հարեւած կարող է լինել առանց այն էլ աղքատացած գիւղական ժողովրդին»:

ԴԻԼԻՋԱՆԻ մեր թղթակիցը գրում է մեզ հետեւեալը. «Սրանից մի քանի օր առաջ Գլխաւորում այրվեց, իր մօր անպարտութիւնից մի 3 տարեկան երեխայ: Մայրը թողնում է մանուկին մնեալ վառված թոնրի մօտ եւ ինքն դուրս է գալիս. երեխան ընկնում է թոնրի մէջ եւ այրվում է»:

Մենք լսում ենք հաստատ աղբիւրներից, որ ԹԻՖԼԻՍԻ հայոց ծխական դպրոցներից միում ռուսացիները այն ատիճանն ծնծում ու մազերից է քաշում աշակերտներին, որ այս օրերս երեխաներից մէկը, որը այդ տեսակ պատիժ էր կրել բարբարոս ռուսացից, ուշաթափ եղաւ եւ ռուսական հարկաւորները հաղւա կարողացան հնազանդեան մանկավարժի թշուառ զոհին նորից ուշքի բերել: Ո՛ր է ռուսամարանի տեսնելը, ո՞ր են ռուսամարանի հողաբաժնուները, —այստի չէ ոչ զբն:

Թիֆլիսցիներին յայտնի Անտոն Ղորանովի եւ տ. Սօֆիա Տեր-Մկրտչեանի գործը, սենատի կարգադրութեամբ, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագրիները, կրկին պէտք է քննվի Թիֆլիսի դատատանական պալատում մարտ ամսի 3-ին:

Քաղաքային դումայի փետրվարի 6-ին վերջին կայացած նիստում, պ. Պ. Իւլմայով ընտրվեց

ռուսամարանական յանձնաժողովի նախագահ: «Ջան-Նախաղի», կամ ուրիշ խօսքերով Վիլմանի սպանութեան յայտնի գործը նորից հանգէս է գալիս: Թիֆլիսի դատատանական պալատի պրօկուրօրը ներկայացրել է իշխան կառավարչապետի հայեցողութեանը մի մեղադրական ակտ, որով առաջարկում է դատի ենթարկել նախկին Շուշու, իսկ այժմ Գանձակի գաւառագետ Կանչիլին եւ պոլիցիական պրիստաւին Ռոստոմբէ-գօյեներին, որոնք նոյնպէս մասնակից են համարվում վերոյիշեալ աղմուկի գործի մէջ:

«Մշակի» ներկայ համարից սկսած տպագրում ենք մեր աշխատակից պ. Միսականի «Սլուսմ» շորատունկեան վէպի շարունակութիւնը: Մի քանի պատճառներով այդ վէպի տպագրութիւնը մի քանի անգամ ընդհատվեց, ուստի աւելորդ չենք համարում հաղորդել, որ դրա ըսկզբի մասերը տպագրված են «Մշակի» 1887 թվ. № 23, 39, 40, 79—83, 85, եւ 1888 թվ. 3, 4, 5 եւ 7 համարներում:

ԲԱՎՈՒԻ ձիւքաշ երկաթուղու դժի ընկնելը, ինչպէս մեզ գրում են, արդէն սկսել են դարձել: Ասում են, որ ապրիլի 1-ին ձիւքաշ երկաթուղին արդէն պատրաստ կը լինի:

Ներկայումս, ինչպէս հաղորդում են Ռիդայի լրագրիները, եռանդուն միջոցներ են ձեռք առնվում, որպէս զի անարգել կերպով գործադրվի այն օրէնքը, որը վերաբերում է ռուսաց լեզուի դասաւորութեան մոցնելուն Բալտեան երկրի քաղաքային սկիւնական դպրոցներում:

Վերջին տեղեկութիւններին նայելով ներկայումս ամբողջ Ռուսաստանում կայ 194 կուսանոց, 6,025 կոյսերով:

Հատ անգամ մեզ պատահում է զանգատներ լսել զանազան փաստաբաններից, որ Թիֆլիսում փաստաբանութիւնն անգամ չէ ապահովացնում մարդուն, եւ որ առհասարակ իրաւաբանները վերջին տարիների ընթացքում քիչ պրակտիկա ունեն, իսկ շատերը բոլորովին գործ չունեն: Այդ երկուսը անսպասելի բան չը պէտք է համարել, քանի որ բոլոր երիտասարդ իրաւաբանները եւ բոլոր փաստաբանները, ինչպէս եւ միւս բոլոր մասնագէտները խմբվում են միմիայն Թիֆլիսում, այս քաղաքից դուրս գալ չեն ուզում, մինչդեռ ամբողջ գաւառներում ժողովուրդը անքան մեծ կարօտութիւն ունի փոքր ի շատէ բարեխիղճ եւ բանիմաց փաստաբանների, որ մեր երկրաստորդ իրաւաբանները դաւաճները գնալով թէ իրանք շատ գործ կունենային, եւ թէ ժողովրդին կազատէին զանազան ապուրկ-միջոցներից եւ զանազան ինքնակոչ աղվօկա տնէրից, որոնք հարստահարող գործունէութեան համար մեծ ասպարէզ են գտել աղէտ ժողովրդի շրկաններում:

Պ. Ստանիսլավ Չարախեան խնդրում է մեզ տպել հետեւեալ հաշիւը յօդուտ հանգուցեալ Մանիի ընտանիքի իր մօտ հանգուցեալ եւ ուղարկած փողերի մասին: «НОВОЕ ОБОЗР.» խմբագրութիւնից ստացված է 87 ռ., իշխ. Բէհրեթովի գործակալութիւնից 63 ռ., «Մշակի» խմբագրութիւնից 13 ռ., Ներսիսեան դպրոցի ռուսացիներէց 25 ռ., Թամաշիլի քարտիստարայի վաճառականներից 151 ռ., Ս. Չարախեանի եւ Ս. Նաղարեւոյի ձեռքով հանգանակված է 1698 ռ., ընդամենը 2037 ռուբլի: Այդ փողից ծախսված է 270 ռ. 44 կօպ. հանդուցեալ Մանիի թաղումս վրա, յետոյ անմիջապէս ուղարկված է Մանիի այրիին 300 ռ., եւ ապա մնացած 1466 ռ. 56 կօպ. ուղարկված է Ա. Փրիգօնովի բանկային գրասենեակի միջոցով: Ուրեմն ծախսը հանած, փոխարկված է Վիլենա Մանիի այրիին, ընդամենը 1766 ռուբլի 56 կօպէի:

ԲԱՎՈՒԻՑ մեզ գրում են. «Վաճառականութիւնը Բաղուի մէջ շատ էլ լաւ դրութեան մէջ չէ, թէն նաւթի մի վազօնի գինը կրկին բարձրացել է մինչև 215 ռուբլի»:

Ինչպէս մեզ գրում են, եղանակը Բաղուի մէջ դարնանային է, միայն անտանելի թողը կատարելապէս կուրացնում է փողոցներում անցողաբաններին աչքերը:

Փետրվարի 10-ին, բանկի թաղութում ռուսաց դրամատիական խումբը, յօդուտ այդ խմբի նշանաւոր դերասան պ. Նիզովիովի պիտի խաղայ կրկին Շէկսպիրի պիեսներից մէկը, այն է «Ռոմէօ եւ Ջուլիէտա»:

Ներկայումս, փետրվարի 6-ին, Թիֆլիսի քաղաքային թատրօնում, երկրորդ նուագապետ պ. Խալիլովի խմբին ընկնելիս ներկայացրին Ռուսինյանայի «Մակբէթ» օպերան: Մի անգամ եւս ստիպված ենք կրկնել, թէ ափսոս այն բոլոր աշխատանքը եւ ջանքը, որ գործ են դրվել մեր բեմի վրա յիշեալ օպերայի նման օպերան ներկայացնելու համար Թիֆլիսի օպերայի կառավարիչները վերջապէս պէտք է հասկանան, որ բեմն է հասարակութեան համար, եւ ոչ թէ հասարակութիւնը բեմի համար: Անկասկած, «Մակբէթ»-ի եւ դրա նման օպերաների ներկայացնելը կողմնակի օգուտ է տալիս թատրօնի կառավարիչներից մի քանիսին, բայց քիչ մեղաւոր է հասարակութիւնը, որ դո՛ւ է գնում այդ մարդկանց անձնական շահերին, ըստիպված լինելով լսելու միանման հնչիւնների մի խառնուրդ: Հասարակութիւնը առաջին անգամ կը լցնի դահլիճը, իսկ երկրորդ անգամ դժուար թէ նա համաձայնվի գալ եւ լսել այդպիսի երաժշտական միակերպութիւններ: Վերջին երկու սեղանում տրվող «Կորդէլիաները», «Ֆերամօրտները», «Վալաշիկովները», «Գոն-Սիդոր դը Բաղանները», «Մակբէթ»-ները եւ այլն ցոյց տուցին, որ հասարակութիւնը գիտէ նրանց ինչ լինելը եւ ըստ արժանոյն գնահատել է դրանց, եւ թէ օպերայի կառավարիչները լաւ կանխին, եթէ զմայլվէին այդ օպերաների երաժշտութեամբ իրանց սենեակներում եւ ոչ թէ առաջարկէին նրանց հասարակութեան, որը կարող է վերջապէս եւ բողբոջ աւելի աղղու կերպով Աւելորդ ենք համարում խօսել այդպիսի ներկայացման մասին: Այսքանը կասեմք, որ պ. Խալիլովի ստացաւ մի քանի պատիւներ եւ թանգազին ընծաներ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ՓՈՓՈՒՈՒԹԻՒՆ ՖԻՆԱՆՍԻՍՏ

Ֆլօկէ իր մինիստրութեամբ հեռացաւ ասպարիդից, եւ հեռացաւ շատ անսպասելի կերպով: Սրանից մի քանի օր առաջ ամբողջ Եւրոպայի ականատես էր թէ ինչպէս Ֆլօկէի մինիստրութիւնը մէկը միւսի ետեկից աջողութիւն է ունենում,—նրա ցանկութեան համեմատ պատգամաւորների ժողովի առաջ դրվեց շրջաններով ընտրութիւն անելու սխառման վերականգնեցնելու նախագիծը, իբրեւ մի հարուած Բուլանթէի նման մարդկանց դիտաւորութիւններին:

Եւ այդ բանում Ֆլօկէ աջողութիւն դուռն Դըրանից յետոյ Ֆլօկէի մինիստրութեան ցանկութեան համեմատ պիտի տանաւորողութեան վերաբնութիւնը սկսելով Սկզբում պատգամաւորների ժողովը այդ մասին հաւանութիւն տուց, բայց մի քանի օրից յետոյ, ձայների առաւելութեամբ վճռվեց յետաձգել սահմանադրութեան վերաբնութեան վիճաբանութիւնները...

Ֆլօկէի մինիստրութիւնը այդ վճռից անմիջապէս յետոյ իր հրաժարականը տուց: Ամբողջ պարաւմենտը ապշեց, որովհետեւ ոչ ոք չէր երկարորում թէ այդ բանը առաջ կը բերի մինիստրական հրաժարական, եւ Ֆլօկէի մինիստրութիւնը, որ բաւական ամուր գիրք ունէր՝ կընկնի:

Թէ արմատականները եւ թէ պատեհականների մի մասը անկեղծ կերպով զղջացին իրանց սխալի մասին,—բայց արդէն ոչ էր. Ֆլօկէ արդէն հրաժարված է, եւ այժմ Մէլին յանձն է առել կազմել նոր, եւ այն էլ ժամանակաւոր մինիստրութիւն: Ժամանակաւոր ենք ասում, որ արմատականները չեն կամենում մասնակցել նրա մէջ կը մտնեն միմիայն չափաւոր հանրապետականները, եւ այդ խումբը, ի հարկէ, քաղաքական ներկայ հանգամանքներում եւ իրերի ներկայ դրութեան մէջ երկար գոյութիւն չէ կատարելու հետեւալ: Ներկայ դժուար կացութեան մէջ ամենից հաստատ մինիստրութիւնը կարելի էր համարել Ֆլօկէի մինիստրութիւնը, որը ստիպվեց

